# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 1/165
*25 նոյեմբեր 2019թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերին կայացրած թիվ 38-Ա և 39-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան*
*Հեռ.՝ 098-29-30-10*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

21 հոկտեմբերի 2019 թվականի N 38-Ա

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման 7-րդ կետը`

*որոշում եմ*

Հաստատել`

1. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման գործողությունների պլանը` համաձայն հավելված N 1-ի:
2. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի բնակչության պաշտպանության միջոցների կառավարման սխեման` համաձայն հավելված N 2-ի:
3. Ուժեղ երկրաշարժերի դեպքում բժշկական ապահովման ուժերի հաշվարկ` համաձայն հավելված N 3-ի:
4. 9 բալ և ուժեղ երկրաշարժերի դեպքում Ողջաբերդ համայնքին հասցված վնասների,փրկարարական և վթարավերականգնողական ուժերի և միջոցների հաշվարկ`համաձայն հավելված N 4-ի:
5. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Ողջաբերդ համայնքի տարահանված բնակչության վրանային ավանի համար առաջին ապրանքներով ապահովման հաշվարկ`համաձայն հավելված N 5-ի:
6. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Ողջաբերդ համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկ`համաձայն հավելված N 6-ի:
7. Ուժեղ երկրաշարժերի դեպքում տուժածներին տրվող հագուստի և կոշիկների ապահովման հաշվարկ`համաձայն հավելված N 7-ի:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 21
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2019 թվականի N 39-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 21-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի,<<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 217-Ա և Ողջաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի N 11-Ա որոշումները՝

*որոշում եմ*

1.Կազմավորել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով հետևյալ կազմով.
Մելքոնյան Նորայր - համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ
Գևորգյան Կարեն - համայնքի ավագանու անդամ,հանձնաժողովի անդամ
Շահբազյան Արիջան - համայնքի ավագանու անդամ,հանձնաժողովի անդամ
Մելքոնյան Եղիշե - համայնքի ավագանու անդամ,հանձնաժողովի անդամ
Հակոբյան Ռազմիկ - մարզպետարանի ներկայացուցիչ,հանձնաժողովի անդամ
Գեղամյան Տիգրան - մարզպետարանի ներկայացուցիչ,հանձնաժողովի անդամ
Հակոբյան Արմեն - մարզպետարանի ներկայացուցիչ,հանձնաժողովի անդամ
2. Մարիամ Կարապետյանին՝ 20-օրյա ժամկետում հրավիրել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 01-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 21-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 21-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. հոկտեմբերի 23
գ.Ողջաբերդ